


ԱՄԵՆԱՅՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ
Պարտին ուղղուել առ—
Խմբագիր և Տնօրէն
«ՀԱՅՔ»-ի
ՏՈՒՐ. Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ.



HAIK
ARMENIAN POLITICAL AND
HYGIENIC FORTNIGHTLY.—
EDITED BY
M. S. GABRIEL M. D.
202 W. 23d Street, New York, U. S. A.
To whom all communications must be
addressed.
Terms for all Countries.
One Year - - - \$ 2.00.

Ձեռգիրք Ձեռն Վերագործուիր
—Բաժանորդագրութիւնք—
Ամէն երկրաց համար
ԵՐԿՈՒ ՏՕԼԱՐ ԿԱՆՈՒԿ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M. D.

Տէր-Խմբագիր—Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

202 W. 23rd St., New York City, U. S. America.

ԱՄ. ԿԵՐ

ՆՈՒ ԵՈՐՔ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 15 1891

ԹԻՒ 20

and as second-class mail matter. at P. O. New York.

ԲՈՎՆԵՐԵԿՈՒԹԻՒՆ

Թէ Գործնական է Կերպարանային Գաղափարն—
Նորագիւր Կազմակերպութեան Հայ Գաղութան Եւրոպայ
հի— Կազմակերպութեան Հայ Կերպարանային Գաղափարն—
Կերպարանային Կազմակերպութեան Հայ Կերպարանային Գաղափարն—
Կազմակերպութեան Հայ Կերպարանային Գաղափարն—
Կազմակերպութեան Հայ Կերպարանային Գաղափարն—
Կազմակերպութեան Հայ Կերպարանային Գաղափարն—

ԹԵ՛ ԳՈՐԾՆԱԿԱՆ Է ԿԵՐՊԱՐԱՆԱՅԻՆ ԳԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Սին յայտն է զուր վաստակ է միութեան ետեւէ լի-
նիլ ուր միութեան պայմանք կը պահանջէ. արեւելեական
պատմութիւնն անհամար օրինակներ կ'ընծայէ միութեան
համար կատարուած անյաջող ջանքերու:

Քրդերն որք այնքան ցեղերու ստորաբաժանեալ
են, ու իցէ միութիւն կազմելու անընդունակ են իրենց
բարբարոս վիճակին մէջ. նոքա քրդական միութեան
գաղափարն անգամ չեն կրնար յղանալ:

Գերման ժողովուրդք քաղաքակիրթ էին, սակայն
գաւառասիրական ոգին կը տիրէր ինոսա. մանր իշխան
ներուն և կոմսերուն հպարտութիւնն ու սնափառութիւնը
նրն ալ այդ ոգւոյն նեցուկ և ոյժ կուտար. այս իշխան-
ներ իրենց շահուն մահացու թշնամի գիտէին զգերմա-
նական միութիւն և բոլոր ուժով կաշխատէին խոչըն-
դոտնել գերման հայրենասիրութեան կեդրոնաձիգ ըն-
թացքն: Պիսմարքի համոզումն էր թէ երկաթն և արիւն,
ոչ թէ դիւանագիտութիւն, պիտի իրագործէին Գերմա-
նիոյ միութիւնն: Եւ արդարեւ այնպէս եղաւ:

Ժ՛Ի և Ժ՛Ե գարեբուն մէջ յեւրոպայ բարձրախոհ
մտքեր աշխատեցան ընկերութեան զանազան տարրերն
ի մի մարմին կազմակերպել — զկրդերն, զաւատական
ազնուականութիւնն, և քրմիւններն, — բայց այդ ջան
քեր վրիպեցան վասն զի դեռ չկար այդ միութիւնն
գործելու համար հարկաւոր հիմունքն: Դեռ տեղական,
մասնաւոր, անձուկ ոգին կը տիրէր. դեռ հանրային ոչ
կարծիք կար, ոչ շահ, ոչ ընդհանրական գաղափարներ,
որոց վերայ հիմնուէր ընկերական միութիւնն: Սակայն
միութեան համար կատարուած ջանքերն այնքան մ'էին թէ
միութեան դարն ծագելու վերայ էր, և արդարեւ ծագել

ցաւ ժ՛Ձին մէջ:

Ըստ այսմ ոկդրան տեսնենք թէ Հայ Գաղթական-
ութիւնը միութիւն կազմելու պայմաններն կը ներկայ-
ացունեն: Հայ Գաղթականութիւնը ոչ բարբարոս են
Քրդաց պէս, ոչ իշխաններ ունին և առանձին փոքրիկ
տէրութիւններ Գերմանացոց պէս, ոչ ալ իրարու ան-
նման ընկերական տարրերու բաժնուած են որպէս Եւրո-
պա էր երբեմն:

Իրաւ, Տաճկաստանի մէջ շատ Հայեր ունին դեռ
տեսակ մի գաւառասիրութիւն փոխանակ հայրենասիրու-
թեան. մին կ'ըսէ ես կետարացի եմ, միւսն՝ ես Տիգրա-
նակերտացի եմ: Բայց այդ տեղական անձուկ ոգին չկայ
գաղթականութեան մէջ. «Ես Կալիպթացի եմ», «Ես
Գահիրէցի եմ» ըսելով պարծեցողներ չկան բարեբաղ-
դարար:

Դիտել պետք է նաեւ, թէ մեր գաղթականութիւն
ներ իրենց առանձինն շահեր չունին իրրեւ գաղթակա-
նութիւն: Նոքա օտար տարրի մէջ կեցած են իրրեւ օտար
մարմին՝ ժամանակաւոր կերպով: Օտար միջավայրին,
Ամերիկային, Անգլիային, Գաղիային շահերն չեն զբա-
ղեցունէր Նիւ Եորքի Մանչէսթըրի և Փարիզի Հայերն
ընդհանրապէս: Եւ այս գաղթականութիւնը իրենց յա-
տուկ հաստատութիւններ, եկեղեցիներ, հիւանդանոց-
ներ, վարժարաններ չունին ընդհանրապէս որոց վերայ
թափեն սպառն իրենց շահեկանութիւն և ուժեր:

Ընդհակառակն, արտասահմանի մէջ ուր որ Հայեր
կան խմբուած, անդ խնդիր մի կայ, մէկ խնդիր հասա-
րակաց, խնդիր մի որ ուսեալին և անուսին, արուեստա-
ւորին և գործաւորին ունի և սիրտն կը զբաղեցունէ փո-
քր ի շատէ — այն է ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ:

Հայկական խնդիրն, ուրեմն, բոլոր Հայ Գաղթա-
կանութեանց մէջ հանրային խնդիր մ'է, կամ, աւելի
ճշգրիտն ասելով, միակ հանրային խնդիրն է՝ հասարա-
կաց ամենայն Հայ գաղթականութեանց:

Բան մի կայ որ ամեն գաղթականութիւն կը ցան-
կայ անել, այն է՝ օգնել Հայ հայրենեաց և ազգի փըր-
կութեան:

Ո՛վ որ զգացմանց և խորհրդոց այս վիճակն կը
ճանաչէ, պարտի ընդունիլ թէ կեդրոնացման գաղափա-
րըն իրագործելի է, թէ կայ հիմն որոյ վերայ պէտք է
հաստատուի միութիւնն, թէ կայ հանրային շահ որոյ
չուրջ կրնան միանալ անջատ տարրեր և հայրենասիրա-
կան Յանձնախմբեր:

Եթէ ժողովրդեան մէջ միութեան գորաւոր կապն,
այն է հայրենասիրական ընդարձակ ոգին, պատրաստ-
ուած է ըստ բաւականին, ի՞նչ արդեւք կայ ուրեմն այդ
միութիւն իրագործելու:

Յառաջ կը բերեն առարկութիւն մի կեդրոնացման դէմ՝ զոր թերթերու մին միւսէն սովորելով կը յիշէ — այն թէ այժմու ընկրակցութիւններն ունին իրարմէ տարբեր ծրագրեր՝ ուստի և չեն կրնար միանալ։

Այս առարկութիւն կը կարուստնէ իւր բոլոր առեւտրային զօրութիւն երբ յիշենք թէ Հայ հայրենասիրեաց և արթնցած ժողովրդեան անհուն մեծամասնութիւնն այսօր ունի ազգային քաղաքականութեան վերայ ընդհանուր համոզումներ սրոյ վերայ միութիւնն կրնայ հիմնուիլ։ Այդ համոզումներ, եթէ չեմք սխալիր, սապէս կրնան ամփոփուիլ։ —

Նախ, որովհետեւ Տաճկահայաստանի Հայն ունի տիրող տարրէն խորին տարբերութիւն ցեղի, կրօնի, լեզուի, բարուց և հետեւապէս բարոյական և իմացական պիտայից, պէտք է որ ԻնքնՕրին լինի իւր ներքին, քաղաքային և բարոյական կեանքի շրջանակաց մէջ՝ սրպէս զի կարենայ վարդապետ։

Երկրորդ, ինքնօրինութեան հասնելու համար պարտի Հայ ցեղն գործածել իւր բոլոր նիւթական բարոյական և ֆիզիքական զօրութիւններն, դիւանագիտութեան բոլոր ճարտար հնարքներն, և զինուոց ու բուսական զօրութեան բոլոր ազդեւորներն ըստ պահանջել հարկին։

Այս երկու հիմնական համոզումներուն մէջ կը ընկղմին ծրագրի տարբերութիւնք։ Մին կրնայ ունենալ յոյժ հեռանկատ ծրագիր վերաբերութեամբ քաղաքական և ընկերական կազմակերպութեան ապագայ Հայաստանի, մին կրնայ լաւ համարիլ ինքնօրին Հայաստան մի ընդ գերիշխանութեամբ Սուլթանին, ուրիշ մի Չարին, երրորդ մի՝ ընդ թեւաբերութեամբ Անգլիոյ, դեռ ուրիշ մի՝ բոլորովին ազատ և ինքնիշխան Հայաստան մի։ Համոզմանց այսպիսի տարբերութիւններ բնական է որ լինին, բայց իրական արդեւ չեն կեդրոնացման. ընդհակառակն, այդ համոզմունք կրնան իրարու աւելի մօտենալ եթէ անոնց պարագլուխներն մէկ կեդրոնին մէջ միացած փոխանակեն գաղափարներ. և մանաւանդ թէ փորձառութիւնն և իրաց միջազգային կացութիւնն շատ պիտի ազդեն գործիչներու ուղղութիւնն եղանակաւորելու՝ առանց սակայն բուն նպատակն փոխելու, որ է իւր համաստեղայն ձեւին տակ — ԻնքնՕրինութիւնն ՕՍՄ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷԿ ՄԱՍԻՆ։

Ն. Երբքի Հ. Հ. Յանձնախումբն պատիւ ունի խնդրել համօրէն հայրենասէր խորհողաց դիտողութիւններն հետեւեալ Ծրագրի վերայ, որ մեծապէս կը տարբերի առաջինէն, որպէս զի կարենայ փութով տալ նմա իւր վերջնական ձեւ։

(ՆՈՐ)

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆ

ԱՇԽԱՏՈՒ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Ամէն Հայ Գաղթականութիւն, թուով ոտուար կամ փոքր, պարտի ունենալ Հայրենասիրական Յանձնախումբ մի, որ ազգային կեդրոնական Յանձնախումբին Գործակցի։

Բաղձալի է որ երկրի մի այլ և այլ քաղաքաց Տեղական Յանձնախումբք իրենց մէջ խմբեր կազմեն և զաւառական, նուհանգային կամ երկրային կեդրոն ունենան։ Օրինակի համար, Եգիպտոսի այլ և այլ քաղաք

քաց Տեղ. Յանձնախումբք կրնան Գահիրէի Տեղ. Յանձնախումբն ընդունիլ իրեն Եգիպտական Յանձնախումբոց կեդրոն, այնպէս որ Ազգային կեդրոնական Յանձնախումբին և բոլոր Եգիպտոսի Տեղ. Յանձնախումբոց մէջ յարաբերութիւնք կատարուին Գահիրէի Յանձնախումբին մի ջոցաւ։ Նոյն կերպով Հնդկաստանի տեղական Յանձնախումբք կրնան Կալկաթայի Յանձնախումբն ճանաչել իրեն Հնդկական կեդրոն, Ամերիկայիներն՝ զնիւ Եորքին, ևն.։

Կրնայ սակայն Տեղ. Յանձնախումբ մի, եթէ այնպէս ուղէ, ուղղակի Տիեզերական կեդրոնին հետ կատարել իւր յարաբերութիւններ։

ՅՕԴ. Բ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԻՆ

Կեդրոնին կամ Հայոց Ազգային կեդրոնական Յանձնախումբին անդամք պիտի ընտրուին Հայ Գաղթական Աշխարհի քուէարկութեամբ, սրում պիտի մասնակցին Եւրոպայի, Եգիպտոսի, Հնդկաստանի, Ամերիկայի, Ովկիանիոյ և, եթէ կարելի լինի, Պարսկաստանի և Ռուսիոյ ևս Հայք։

Ամէն մէկ քաղաքի գաղթականութիւն, թէ և բազմաթիւ միայն մի քանի Հայերէ, պիտի կարենայ կանոնաւոր ժողովոյ մէջ և ծանուցուելիք շարթուն՝ քուէարկութիւն կատարել։ Ի կանոնաւոր նիստ գումարեալ գաղթականութեան մի անդամք պիտի նշանակեն տասն անուններ իրեն յարմար ընտրելիներ, և այդ տասն անուններ աչքի առջև ունենալով իւրաքանչիւր քուէարկութեան պիտի նշանակէ իւր քուէաթղթի վերայ այն հինգ անուններն որք իրեն լաւագոյններն կը թուին նախնաւորեալ տասնին մէջէն։

Այս առաջին քուէարկութեան համար միայն լինելով իւրաքանչիւր գաղթականութիւն իւր քուէարկութեան արդիւնքն պիտի պաշտօնապէս հաղորդէ նիւ Եորքի Հ. Հ. Յանձնախումբին, և սա պիտի տեսնէ թէ ոյք են տասն ընտրելիներն իւրաքանչիւր գաղթականութեան և թէ այդ տասնին ամէն մէկն քանի քուէ ընդունած է։

Այսպէս ամէն երկրի տ'ղական Յանձնախումբոց կազմանէ եկած քուէներն թուելով՝ նիւ Եորքի Հ. Հ. Յանձնախումբն պիտի գտնէ թէ ով են այն հինգ ընտրելիներն որք ընտրեալ քուէարկութեանց մէջ քան զամենայն աւելի քուէ շահած են, և նոցա պիտի ծանուցանէ իրենց ընտրութիւնն իրեն անդամ Ազգ. կեդր. Յանձնախումբին։

Որովհետեւ պարզ է թէ կան նշանաւոր և փորձառու գործիչներ որք ծանօթ են Հայ Աշխարհի ամէն կողմին, և անոնց անուանք պիտի գտնուին ամէն տեղական քուէարկութեան մէջ, կը յուսացուի թէ նոյն զլխաւոր Գործիչներն պիտի լինին քան զամենայն աւելի քուէ շահողներն, և հետեւապէս՝ կեդրոնի անդամքն։ Բայց որովհետեւ քուէարկուէն ազատ պէտք է լինի չտալու իւր քուէն այնպիսի գործիչի մի համար որ իրեն անյարմար կը թուի ու իցէ պատճառաւ, և որովհետեւ հինգ անուններ անպատճառ պարտի նշանակել իւր քուէաթղթի վերայ, անոր համար տասն ընտրելիներու անուններ նախապէս նշանակելու տրամադրութիւնն ընդունուած է ի վերոյ, որպէս զի քուէարկութեան կարենան ազատորէն տալ իրենց քուէն միայն որոց որ կամենան։

Ն. Երբքի Հ. Հ. Յանձնախումբն քան զամենայն աւելի քուէ շահող առաջին հինգն գտնելէ զատ, պիտի գտնէ նաև թէ ով են անոնցմէ յետոյ քան զամենայն աւելի շահող երկրորդ հինգն։ Եւ ի վստահութիւն ամենեցուն պիտի հրատարակէ ամէն մէկ գաղթականութեան կազմէ իրեն հաղորդուած ընտրելեաց անուններն, քուէներն, և քան զամենայն աւելի քուէ շահող երկրորդ հինգին ևս անուններն։

ՅՕԴ. Գ.

ՆՊԱՏԱԿ

Կեդրոնական Յանձնախումբն պաշտօն պիտի ունենայ կազմակերպել և ղեկավարել Հայոց Հայրենասիրական շարժումն ի բարեւոք լուծումն Հայկական Խնդրոյն:

Հայկական Խնդրոյն բարեւոք լուծումն առելով Հայ Հայրենասիրաց անհուն մեծամասնութիւնն կը հասկանայ Տաճկահայաստանի գոնէ մէկ մասին ազատումն օտմանեան բռնապետութեան լծէն և ինքնօրինութեամբ օժտուիլն:

ՅՕԴ. Դ.

ՍԿԶՔՈՒՆՔ

Հետեւեալ երեք սկզբունքն Հայրենասիրաց մեծամասնութեան կողմանէ առ հասարակ ընդունուած լինելով Կեդրոնական Յանձնախմբի Սկզբունքն պիտի լինին—

(1) Ժողովրդի մի բաղդն իւր իսկ ընթացիւք մասնաւոր կ'եղանակաւորի քան արտաքին պարագայներէ, և թէ, հետեւապէս, Հայ Ազգն պարտի ինքն իրեն օգնել ամենայն հնարաւոր միջոցներով՝ առանց իւր վտանգութիւն դնելու օտարաց վերայ:

(2) Ազգն ի հարկին գինուց զօրութեան և բուռն միջոցներու պիտի դիմէ ինքնօրինութեան հասնելու համար:

(3) Ինքն իրեն վստահելով հանդերձ՝ Ազգն պարտի ջանալ քաղաքակիրթ աշխարհի կարծիքն իր կողմն ունենալու:

Վերի երեք սկզբունքէն կը բխին հետեւեալ գործնական եզրակացութիւնք.—

(1) Կեդրոնին աշխատութեան զլիարար ճիւղն պիտի լինի Ներքին, ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ճիւղը: Կեդրոնական Յանձնախումբն պիտի միջոցներու այնպիսի գործիւն մի ձեռք առնու որով Ազգին մէջ ծաւալէ անձնուէր Հայրենասիրութեան ոգին և ազգային ողջամիտ գաղափարներ, միանգամայն Նորա նիւթական և ֆիզիքական ուժերն կազմակերպելով՝ պատրաստէ զնա ճշմարտութեամբ գերազայն վայրկեանին:

Առ այս, Կեդրոնն ինքն պիտի որոշէ իւր գործաւորներ և գործիներ, իւր առաքեալներ, լրաբերներ, թղթակիցներ, մարդիչներ ևն:

(2) Կեդրոնական Յանձնախմբի գործունէութեան երկրորդ ճիւղն պիտի լինի ԱՐՏԱՔԻՆ, ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ կամ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ճիւղն, որով պիտի շինէ Եւրոպեան հանրային կարծիքն ի նպաստ մեր դատին, լինի ֆռանսերէն — անգլիերէն թերթի մի հրատարակութեամբ, լինի Եւրոպեան Մամուլն յողումներ տալով կամ գրել տալով, միանգամայն գիւնապատկան թղթակցութեամբ և բանակցութեամբ — չըջաբերականօք ուղղեալ առ կառավարութիւնս և առ դեսպանս, — յատուկ պատգամաւորութեամբ առ իշխանս և վեհապետս, — այլ և այլ աստիճանի գաղտնի իրաւագութիւն կամ հասկացողութիւն հաստատելով այնպիսի պետութեանց հետ որք չափ կրնան ունենալ ինքնօրէն Հայաստան մի տեսնելու մէջ, կամ այնպիսի ժողովրդոց հետ որք այժմ մեր լծակիցք են ընդ թուրք բռնապետութեամբ:—

ՅՕԴ. Ե.

ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԻՆ

Ազգային Կեդրոնական Յանձնախմբի անդամք մէկ տեղ գալով քուէարկութեամբ պիտի ընդունին իրենց ներքին կազմակերպութեան վերաբերեալ ամեն որոշում: Այս շերտով պիտի ընտրեն իրենք իրենց մէջէն նախագահ, քարտուղար, գանձապետ, Ներքին և Արտաքին Գործոց Պետեր կամ նախարարներ, պիտի քուէարկեն ծախքերն, պիտի յօրինեն գործունէութեան մանրամասն Յայտագիր՝ հաւատարիմ մնալով ՍԿԶՔՈՒՆՔ: Նոյն-

պէս պիտի ընտրեն Կեդրոնական վայր մի ուր ուղղուին թղթակցութիւնք և դրամ:

Ինքնին հասկանալի է թէ ծանօթ Կեդրոնական վայր մի ունենալէ յետոյ, անդամք չպիտի ստիպուին լուրն ալ հոն մնալ, այլ պիտի որոշեն թէ Ազգային Գործոց համար ուր տեղ կամ ուր տեղեր պէտք է հաստատեն երկրորդական կեդրոն մի կամ կեդրոններ, ուր բուռն Կեդրոնին անդամաց տեսչութեան ներքե աշխատութիւնք յառաջ մղուին:

Կեդրոնին ներքին կազմակերպութեան ծրագրին արամագրութեանց համեմատ բոլոր անդամք պարբերաբար կամ ի պահանջել հարկին ի միասին գալով խորհրդակցութիւններ պիտի ընեն և խնդիրներ, առաջարկներ, ծախքեր, տեղեկագիր պիտի որոշեն քուէարկութեամբ:

ՅՕԴ. Զ.

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Կեդրոնական Յանձնախումբն տարին միանգամ պիտի հրատարակէ կամ Տեղական Յանձնախմբոց պիտի յղէ իւր գործոց և ծախուց տեղեկագիրն այնքան ընդարձակ և մանրամասն որքան հնար է առանց պարտաւիւր այնպիսի կեանք որոց հրապարակումն կրնայ վնասարեւ լինիլ Ազգային Դատին:

ՅՕԴ. Է.

ՇՐՋԱՆ ՊԱՇՏՅՈՒՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Կեդրոնի Անդամոց պաշտօնն պիտի տեւէ երկու տարի, բայց պիտի կրնան կրկին և կրկին վերընտրելի լինիլ:

ՅՕԴ. Ը.

ԹՈՇԱԿ

Ազգ. Կեդր. Յանձնախմբի իւրաքանչիւր անդամն պիտի ընդունի 4,000 Փրանքի կամ 800 թալէտի տարեկան թոշակ:

ՅՕԴ. Թ.

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿ ՀԱՅՈՑ

Կեդրոնական Յանձնախումբն պիտի ունենայ Հայոց Կեդր. Սնտուկ մի, ուր պիտի մտնեն ազգային և օտար նուիրատուութիւնք և այլ եկամուտք: Այդ սնտուկէն պիտի ընդունին Կեդրոնի անդամք իրենց թոշակ և պիտի վճարեն պաշտօնական թղթակցութեանց, ուղեւորութեանց, հրատարակութեանց ծախքերն, ինչպէս նաեւ բոլոր յեղափոխական գործունէութեան համար հարկաւոր եղած ծախքերն լինի գինուց համար, լինի այլ և այլ կարգի օգնականաց, առաքելոց, լրաբերից, մարդիչներու և նմանաց համար:

Տարին մէկ կամ երկու անգամ — ըստ որոշման Կեդրոնին — համարէն Գաղթականութեանց մէջ կամաւոր նուիրատուութիւններ պիտի հաւաքուին ի ձեռն այն Տեղական Յանձնախմբոց որք պաշտօնապէս ի յարաբերութիւն են Կեդրոնին հետ: Գոյացեալ ամբողջ գումարք պիտի յղուին Կեդրոնական Սնտուկին:

ՅՕԴ. Ժ.

ՊԱՇՏՅՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Եթէ Ազգ. Կեդր. Յանձնախմբի անդամոց ու և մէկուն դէմ մատնչութեան, անհաւատարմութեան, անկարգապահութեան կամ այլ ծանր ամբաստանութիւն լինի, խնդիրն նախ Կեդրոնն ինքն պիտի քննէ ընդհանուր դուրմարման մէջ և եթէ դամբաստանեալն պաշտօնական լինելու պարտաւոր դատէ, ի ժողով պիտի կոչէ այն հինգ Հայերն, որք ընդ. քուէարկութեան տեսն քան զամենայն աւելի քուէ շահող երկրորդ հնգեակն կը կազմէին: Այս հինգն միանալով Կեդրոնին, պիտի վերաքննեն խնդիրն և Կեդրոնի անդամոց հետ ի միասին պիտի կատարեն վերջնական քուէարկութիւն, որոյ

զօրութեամբ ամբաստանեալն կամ պաշտօնանկ կը լինի կամ պաշտօնին մէջ կը հաստատուի:

Եթէ վերի եղանակաւ հինգ դատաւորներ չկարենան հայթայթուիլ, պակասն պիտի լեցուի մասնակցութեամբ այն Հայուն որ ատենապետն է ընդ. քուէարկութեանց մասնակցած եղող և քան դամենայն աւելի բաղմամբ քուէարկուեն որ ընդող զաղթականութեան Տեղ. Յանձնախմբին կամ Յանձնախմբոց խմբին:

ՅՕԴ. ԺԱ.

ԼՐՈՒՄՆ ՊԱԿԱՍԵՍԱԼ ԱՆԴԱՄՈՑ

Կեդրոնին մէջ պաշտօնանկութեամբ, հրաժարմամբ կամ մահուամբ պակասեալ խնդամոյ տեղն պիտի լեցուի այն Հայերով որք ընդ. քուէարկութեանց ատեն քան դամենայն աւելի քուէ շահող ընտրելեաց երկրորդ հնգեակին մէջ գտնուած էին, և ի հարկէ իրենց քուէից ըստ ուարութեան կարգաւ:

ՅՕԴ. ԺԲ.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ

Եթէ ընդ. ընտրութեանց մասնակցող Հայերուն մեծամասնութիւնն պահանջէ, Կեդր. Յանձնախումբն պարտական է իւր գործոց և ծախուց լիուլի հաշիւն տալ այն ժողովոյ որ պիտի բաղկանայ քան դամենայն աւելի քուէ շահած եղող երկրորդ հնգեակէն, և եթէ սոցա թիւն պակասեալ գտնուի՝ պիտի լրանայ որպէս նշանակուած է դատաւորաց թիւն լրացնելու մասին՝ Ժ. Յողումածին մէջ:

(Կնիք Հ. Հ. Յանձնախմբին նիւ Եորքի)

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅԲ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲՆ

Ն. Եորքի Հ. Հ. Յանձնախումբն ստացաւ նամակ մի Կալկաթայէն 25 Օգոստ. թուակիր, որով կը ծանուցանեն թէ քաղաքին Հայերէն ոմանք որք ջերմ համակիր են կեդրոնացման առաջարկին, արդէն իրենց քուէարկութիւն կատարած են: Նամակին ներփակեալ քուէթղթին վերայ նշանակեալ են իրենց ընտրելեաց անուններն, և ստորագրուած կանոնաւորապէս: Քուէառմասին հրատարակութիւնն կը վերապահուի պատշաճ ժամանակին:

Այս առթիւ կը բաղձայ Ն. Ե. Յանձնախումբն հըրապարակաւ շնորհաւորել Կալկաթայի այն Հայերեակիցներն որք խնդիրն ուղիղ ըմբռնած լինելէ յետոյ իրենց գործնական և մղիչ բնաւորութեան ապացոյցն տուին ի խրատ այն դաղթականութեանց որք մինչև անգամ տեղական Յանձնախումբ մի կազմելու և Ծրագրին քննելու չափ աշխոյժ չունեցան ցարդ:

Կ Ե Դ Ր Ո Ն Ի Խ Ն Դ Ի Ր Ն ԵՒ «Լ Ա Ռ Մ Ի Ն Ի»

Տիար Մ. Չերազ Լ'Առմէնիի Սեպտ. 15ի թուոյն մէջ կը խօսի Կեդրոնական Յանձնախմբի խնդրոյ մասին բաւական երկարօրէն: Իւր յօդուած կ'ամփոփեմք հետեւեալ կերպիւ:

«Օգ. 13ի Western Morning Newsի մէջ կը կարդանք. — ... Եւրոպայի և Ամերիկայի հայ գաղթականութիւնք որոշած են կազմել համահայկական նիզակակցութիւն մի որ ունենայ Գործադիր Խորհուրդն ի լոնտոն: Այս գաղափար արդէն ընդունած է հաւանութիւնը ու աջակցութիւնն Տիար Կ. Յակոբեանի, Նախագահին Հայ Հայրենասիրական Միութեան, որ կրնայ իրաւամբ նկատուիլ իրրեւ առաջնորդող ոգին և վարիչն այս շարժման: ... Գործադիր Խորհուրդն հինգ անգամներէ պիտի բաղկանայ, և իրաց բնական ընթացքին բերմամբ սպասելի է որ Տիար Կ. Յակոբեան լինի նախագահն,

օգնական ունենալով զՏ. Մ. Չերազ, Լ'Առմէնիի Տնօրէնն:»

«Այս հասուած, քիչ փոփոխութեամբ, երեցած է ուրիշ բազում անգղիերէն թերթերու մէջ ևս: Ուշիմ ընթերցողն պիտի հասկանայ թէ ով կրնայ ներշնչած լի ինչ այդ տողեր: Կարծեմք թէ Տ. Յակոբեանի նախագահութեան խնդիրն կանխահաս է. ինչպէս նաև Լ'Առմէնիի Տնօրէնին օգնականութեան խնդիրն: Այս տեսակ հրատարակութիւնք միայն ֆիաս կրնան անել «Հայք»ի ջատագովութեան՝ զէնք ընձեռնելով ոստիս թերթերուն, որք կատարի յօռածներով պնդած են թէ այս գաղափարի պաշտպաններն փառասէր մարդիկ են որոց երազն է Գլուխ լինիլ և միանգամայն լաւ թոշակ առնուլ:»

Աստ Լ'Առմէնի մէջ կը բերէ Տիար Մէլիք Պէկլարի չըջաբերականէն մաս մի և հետեւեալ խորհրդածութիւնըն կ'աւելցունէ. —

«ՀԱՅԲ» երբէք առաջարկած չէ նիւ Եորքն Կեդրոն անել, այլ զԼոնտոն շարունակ նշանակած է իբրեւ կեդրոնանիստ: Երբէք առաջարկած չէ նա զՊրիմեան Հայրիկ, և ընտրելիներն զորս կը թուի նա ունենալ ի նկատի՝ չեն ամենայն այնքան ակոնաւոր որքան Տիար Մէլիք Պէկլար կ'երեւակայէ: Սակայն և այնպէս Կալկաթայի Հայկ. Ընկերակցութեան մեծամասնութեան հերքումն բաւական կշիռ ունի այս խնդրոյ մէջ:

«Բանի որ Հ ա մ ա հ ա յ կ ա կ ա ն Մի ու թ իւ նն այսպիսի դժուարութիւններ արդէն ունի, ցաւալի է որ ոմանք զհետ են նոր դժուարութիւններ ալ աւելցունելու, այժմէն յարուցանելով ունայն խնդիրներ: Նիւ Եորքի Յանձնախմբին առաջարկն լաւ է, թէև քիչ գործնական. կ'արժէ որ փորձուի այն. թողունք ուրեմն իւր անդամոց անել անոր հաւատարիմ փորձն: Ժողովրդեան անկ է ուրեմն զայն իգործ դնել. և եթէ ժողովրդեան մեծամասնութիւնն նպատաւոր գտնուի և ընտրութեանց ձեռնարկէ, ընտրուածներն ոյք և լինին, չպիտի կրնան մերժել իրենցմէ խնդրուած ծառայութիւնն և ազատօրէն պիտի ընտրեն իրենց նախագահ և այլ պաշտօնեաներ:»

Մեզ ևս կը թուի թէ սխալ մի գործուած է նախագահութեան խնդիր յարուցանելով այժմէն երբ դեռ կեդրոնացման հիմնական գաղափարն ծաւալելու ջանք կը լինի, և մեծագոյն սխալ մ'ալ գործուած է անուն տալով: Հնօրեայ գործիչ մի, պարտի աւելի լաւ ճանաչեմք խօթամիտ գրողներն, որք հանրային խնդիրներն անձնականի վերածելու դժբաղդ սովորութիւնն ունին, և արդէն այդ ոգին երեցած էր ներկայ խնդրոյն մէջ ևս իւր վերջին աստիճան նողկալի երեւոյթով: Տիար Յակոբեան, եթէ է հեղինակն գրուածին, եսական մարդու մի տպաւորութիւնն պիտի տայ ամեն անոնց որք իւր այնքան ընտիր հրատարակութիւններն թայմզի և այլ անգղիական թերթից մէջ ը'թերցած չլինելով, իւր ոգին և գրիչն այդ յօդուածէն պիտի դատեն:

Ն. Եորքի Հ. Հ. Յանձնախումբն հետեւեալ դարձ պատասխանին ուղղեց առ Հնչակեան կուսակցութիւնն, առ որ հրաւէր միութեան յղած լինելով՝ ինչ ինչ առարկութիւններ պարունակող պատասխան մ'ընդունած էր:

Ս. Ե. Երզնկայի Խմբագրութիւն «Հնչակ» պատուական Լրագրի

Մեծ. Հայրենակիցք,

Նիւ Եորքի Հայ Հայրենասիրաց Յանձնախումբն պատիւ ունեցաւ ընդունիլ Ձեր պատասխան, Սեպտ. 17 թուակիր, յորում կը գտնեմք լուրջ և կարևոր քննադատութիւններ մեր Ծրագրի դէմ:

Յանձնախումբն ինքզինք կը նկատէ իբրեւ բացատրիչն հանրային բաղձանայ, և մեր Ծրագիր ուրուագիծ

միայն էր՝ մշակութեան և կատարելագործութեան մեծագույն կարօտ։ Նորա հրատարակութենէն ի վեր, իբր չորս ամսոց միջոցում, բազում կէտերու վերաբերութեամբ բարեփոխումներ և լաւելումներ առաջարկուած են այլ և այլ մարմնոց և կուսակցութեանց կողմանէ, և ուստի Ծնագիրն հնացեալ է արդէն։

Մասնաւոր գոհութեամբ ի նկատ առինք Ձեր կուսակցութեան ևս քննադատութիւններն և պատրաստեցինք նոր Ծրագիր մի, զոր ներփակ պիտի դնենք, — զնոյն կը յղեմք այլ գործիչներու ևս ի քննութիւն, որպէս զի նոցա դիտողութեանց համեմատ տամք Ծրագրին իւր վերջնական ձևն որով պիտի ներկայանայ քսէ-արկուեաց։

Սակայն պարտիմք ձեր քննադատութեանց քան զամենայն էական կէտին վերայ աստէն ներկայացունել Ձեզ մեր մտածութիւն։

«Անհրաժեշտ է,» կ'ասէք ձեր նամակի մէջ, «որ միութեան հարցն ըստ ինքեան շատ կարեւոր է։ Հետեա-րար փաստաբանել այս տեղ դրա սկզբունքն՝ աւելորդ է։ Բայց այլ է խնդիրը, երբ անցնում ենք այն կէտե-րի վրայ, թէ ինչ ձև պէտք է ընդունէ այդ միութիւ-նը, թէ ինչ եղանակով և ինչ սկզբունք-ներ ի վրայ պէտք է նա իրականանայ, և թէ ինչ ուղղութեան եւ ծրագրի պէտք է նա հետեւէ։ Այդ կէտերի քննութեան ժամանակ կարող են առաջա-նալ շատ վիճելի հարցեր, որոնք մէկը միւսից աւելի կարօտ կը լինին մանրագնին լուսաբանութեան և լուրջ շրջակայեաց և նպատակայարմար լուծման։... Յարգե-լի Յանձնախումբդ չէ առաջարկել ու է ծրագրի սկզբունքներն, նպատակներն ու գործ ունէն ու թեան, որի հիմունքների համեմատ գոր-ծէին միացած մարմինները։»

Արդարեւ Յանձնախումբս շատացած է ընդհանուր կերպիւ սահմանելով Տիեզերական Կեդրոնին պաշտօնն՝ սապէս. «կազմակերպել ու վարել ազգային հայրենասի-րական ջանքերն ի բարեօք լուծումն հայկական խնդ-րոյն։» Յօդ. Բ.

Նոր Ծրագրին մէջ զայս կէտ աւելի ընդարձակ-ուած և գործունէութեան սկզբունքն աւելի ճշգրտած պիտի գտնէք։ Պարզ է, սակայն, թէ Յանձնախումբս, հանդերձ այն ամենայն օգնութեամբ զոր ընդունեց այլ և այլ հայրենասիրական Յանձնախմբերէ և գործիչներէ, չպիտի կրնայ Կեդրոնին գործունէութիւնն մանրամաս-նօրէն յայտագրել։ Եթէ զայդ ընելու ձեռնարկէինք, անգրաւ թղթակցութեանց և երկարածիգ յապաղման ենթարկած պիտի լինէինք գործն։

Շատ աւելի դիւրին և շատ աւելի լաւ կերպով Ծրագրին այդ մասն կրնայ կատարելագործուիլ ի ձեռն նոյն ինքն Կեդրոնին՝ երբ միանգամ կազմուի։ Կեդրո-նին անդամքն ի մի վայր գալով պիտի կրնան իւրաքան-չիւր ի մէջ բերել իւր կարծիք, թելադրութիւն և փառտ, ու կանոնաւոր քուէարկութեամբ մուծանել գործունէ-ութեան Յայտագրի մէջ ինչ որ մեծամասնութեան հա-ւանութեանն արժանանայ։ Ձեմք կարծեր թէ այդ առ-թիւ ծագին հիմնական և անհաշտելի անհամաձայնու-թիւնք Կեդրոնին անդամոց մէջ, ըստ որում ժողովրդ-եան և գործիչներու մեծամասնութեան հասարակաց ե-ղող հիմնական սկզբունքն արդէն Ծրագրին մէջ բաւա-կան յատակ կերպիւ գրուած և ընդունուած պիտի լի-նին։

Գալով յարգելի կուսակցութեանդ քննադատու-թեանց երկրորդ կամ ձեռնական, կազմակերպական կե-տերու մասին, կը դիտեմք թէ «ահագին» կոչած էք անդամոց թոշակն։ Յանձնախումբս կարեւոր կը դատէ անդամոց թոշակաւոր լինելն, իբրեւ սկզբունքի խնդիր, այլ թոշակի քանակն կրնայ նուազեցուիլ։ 7,500 Փրան-քի տարեկան թոշակն ոչ հարուստ կ'ընէ զոք, և ոչ ալ թոյլ կուտայ շուայլ կեանք վարելու։ Բայց որովհետեւ

այդ գումար գրեթէ ամեն կողմերէ չափազանց նկա-ուեցաւ, նոր Ծրագրին մէջ իջուցած եմք զայն 4,000 Փրանքի։ Հաւանական է թէ այս անգամ ալ չափա-զանց քիչ համարուի, և յետոյ պէտք լինի բարձրացու-նել զայն 5,000ի։ Այդ կէտ երկրորդական է ըստ մեզ, և վստահ եմք թէ Կեդրոնի անգամք անձնուէր ոգւով պիտի աշխատին յոյժ համեստ թոշակաւ, որ միայն պարզ ապրուստի հոգէն զիրենք կ'ազատէ։

Բուէարկել կարենալու համար հին Ծրագրին կը պարտաւորէ ամէն Հայ կանխապէս վճարելու հինգ ֆը-րանքի ազգային տուրք մի ի հաշիւ Կեդրոնական Սնտու-կին։ «Պարզ է,» կ'ասէք ձեր նամակի մէջ, «թէ այդ գումարն կարող են վճարել միայն փոքր ի շատէ ունե-ւորները։ Իսկ աշխատաւոր ժողովուրդը, իսկ չունեւոր նե՞րը, որոնցից է գլխաւորապէս կազմուած յեղափո-խական բանակը — հապա դրա՞նք ինչ են։... Ինչո՞ք համար և ի՞նչ հիման վրայ օրինաց այդ բնական իրաւ-ունքի գործադրութեան առջև չի նական պարիսպների արգելքներ ստեղծել։»

Մեք այդ տուրքը նշանակած եմք՝ ի փորձոյ տե-սած լինելով թէ չունեւոր, գործաւոր Հայերն որպիսի յօժարութեամբ և անձնութեամբ տուած են իրենց Փրանքներ Ս. Գործոյն ի նպաստ. և համոզուած եմք թէ նոյն դասակարգ աւելի դիւրութեամբ պիտի յօժա-րէր տալ իւր Փրանքներ երբ տեսնէր թէ ընտրեալոյն գործիչներու միացեալ ձեռքին մէջ կը դնէ զայնս։ Այլ նկատելով թէ կանոնաւոր և ստիպիչ տուրքի պատճա-ռաւ կրնան ունեւոր յետս կալ քուէարկութենէ, որով և գուցէ շարժումն չլինի այնքան ընդհանուր որքան պի-տի լինէր առանց այդ պայմանին, նոր Ծրագրին մէջէն կը ջնջեմք կանոնաւոր տուրքն և անոր փոխանակ կը դնեմք կամաւոր նուիրատուութեանց կանոնաւոր հա-ւաքման դրութիւնն։

Այսպէս, Մեծ Հայրենակիցք, մեր պատասխաններ դնելով ձեր առջև և յուսալով թէ զայնս բաւական գո-հացուցիչ պիտի գտնէք, կը խնդրեմք որ աջակցիք մեզ այս դժուարին ձեռնարկի մէջ, և նշանակէք մեզ զնա զոր կրնամք ներկայացունել գաղթականութեանց իբրեւ ընտրելի Հնչակեան Յարգելի կուսակցութեանդ։

Վստահ եմք թէ Ձեր զօրաւոր կուսակցութիւն յայտ և ապագայ ազգային խնդրոց մէջ պիտի տայ այ-լոց օրինակ զիջողութեան և անձնուէր համակերպու-թեան՝ ի շահ Հայրենի դատին։

Ընդունեցէք, Մեծ. Տիարք, մեր խորին մեծա-րանք։

Ի դիմաց Նիւ Եորքի Հ. Հ. Յանձնախմբին,
Ատենադպիր
Յ. Կ. ՀիւրիՄիշ
Ատենապետ
Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՆԱԽԵԿ Կ. ՊՈԼՍԷՆ

15 Սեպտ. 1891

Նոր բանտարկեալներէն 3—4 քաջառողջ երիտա-սարդներ մեռան — մին դեռ ամիս մը յառաջ — յերե-սաց բանտի խստութեանց և ապականութեան։

Մեր թուրք թերթեր, յետ գրելոյ մի քանի սու-տեր թէ գողերն բռնուած են կամ բռնուելու վրայ, կը ելնեն օտարազգիներ զրպարտել, իբր թէ դոքա գոր-ծիք ըրած են գողերն՝ կառավարութեան վարկը եւրո-պիոյ մէջ կոտորելու համար...

Նախարարական փոփոխութիւնք մեզ համար օ-գուտ չունին։ Նորերն ալ առաջնոց նման մեր ազգի ո-խերիմք են, որոց պետ կը նկատուի ա. քարտուղար Սիւ-րէյա փաշա, տգէտ և մոլեռանդ անձ մը, որ Սուլթանին վրայ մեծ ազդեցութիւն ունի։ Հայոց դէմ աստիճութիւ-նըն առաջ միայն քաղաքային պաշտօնեաներէ կը սպասու-ուէր. հաստատուած է թէ այժմ բոլոր զինուորականք ալ վարակուած են։ Ութ օր առաջ Պահճէ գափու Եէնի

ճամբի առջի հրապարակին մի խեղճ հայ խոհարար շարա-
չար ծեծուեցաւ մի սպայէ, որմէ համարձակեալ էր նոյն
ժամուն կերածին դրամն ուզելու. ուրիշ սպայ մ'ալ ա-
ռաջնոյն կը միանայ և լաւ մը կը տոբեն ինքրկայութեան
հարիւրաւոր անցորդաց: Մի թուրք էֆէնտի վրայ կը
հասնի և գիտողութիւն կ'ընէ ինչպստտ Հայուն. բայց
սպայից մին բրտութեամբ նորա վրայ յարձակիլ կը պատ-
րաստուի «կեալուռ տուր, էրմէնի տիր նէ... տիր» ըսե-
լով. մարդը չուզելով գործ բանալ ըրիկ կը հեռանայ:

ՀՈՅ

ՆՇԱՐԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս 1891 սեպտ. 7

Թուրքիոյ մէջ սովորութիւն դարձած է յաճախ
դադրեցնել լրագրերը անպայման կերպիւ և քանի մը
օրէն դարձեալ հրատարակելու հրաման տալ:

«Հայրենիք» լրագիրը որ վերջերս կրկին հրատա-
րակուիլ սկսած էր անցեալ օրեր տպագրական տեսչու-
թեան կողմանէ անպայման կերպիւ դադարման դատա-
պարտուեցաւ: Ահա թէ ինչ պատճառաւ:

«Հայրենիք»ի Տնօրէնը տեսնելով որ իր դէմ շատ
մը անտեղի յարձակումներ կը լինին սոսկ անձնական ա-
տելութեան պատճառաւ, Տարակոյս վերնագրով յօդ-
ուած մը հրատարակեց, որի մէջ կ'ըսէր թէ՝ ժամանա-
կաւ Պրըքստանեան սովեւոց յանձնաժողովին 500 ոսկի
նուիրեց, անպիտան նախանձստներ ելան ըսին թէ ոչ
մարդ մը որ իր ընտանիքը ապրեցնելու անկարող է և
սովեւոց յանձնաժողովին 500 ոսկի կը նուիրէ: «Հայրենի-
ք»ի տնօրէնն հոս սխալելով 1 ոսկիի անդ 500 ոսկի կը
նշանակէ. յօդուածը գրողը վարչութեան տնօրէնն էր
և վարչութեան անկ էր այդ սխալը ճշդել: Բայց սովե-
ւոց յանձնաժողովին նախագահ Աբիկ էֆ. Ունճեան, որ
արդէն հակառակ էր «Հայրենիք»ի՝ քանի որ սա քիչ մը
համարձակ կը դրէր. յարմար առիթը գտած սեպտեմբեր
«Հայրենիք»ի վարչութեան իւր հերքում նամակ մը կը
յղէ որ լի էր բազում նախատինքներով. ստիպելով զայն
որ իր նամակը նոյնութեամբ հրատարակէ: Մեր մեծ
ազգասէրը (°°°) կը կարծէր թէ վարչութիւնը շատ մը
հացկատակներու նման իր խօսքը խոնարհաբար գործադ-
րէր. բայց բանը այնպէս չլինի. շողոքորթներու և կեղ
ծաւորներու երկրին մէջ լաւ մարդիկ՝ ալ պակաս չեն.
վարչութեան տնօրէնը՝ մեծապատիւ էֆէնտիին կը պա-
տասխանէ թէ՝ վարչութեանս միայն անկ է իր սխալը
հերքել:

Ով մա՛րդ, ինչ մեծ համարձակութիւն, բռնութեան
երկրին մէջ դու անկախ լինիլ կը խորհիս, չես գիտեր
թէ պէտք է խոնարհութեամբ գլուխ տալ Վսեմաշուք-
ներին եթէ չես ուզեր անօթի մնալ. դու շատ յանդու-
գըն ես եղեր պէտք է որ քայլափոխիդ մէջ իսկ անկախ
լինիս:

Հետեւեալ օրը ոչ ևս «Հայրենիք» տպագրական
տեսչութիւնը անպայման կերպիւ դադարման դատա-
պարտած է զանի, որովհետեւ համարձակած էր Սուլ-
թանին ոտները լիզողին հրամանը չը գործադրել:

Ազգասէր էֆն. (°°°) եղած էր պատճառ այդ դա-
դարման. տպագրական Տեսչին և Թուրքիոյ գրեթէ բո-
լոր նախարարաց քով իր ունեցած ազդեցութեամբ:

Չը մոռնանք ըսել թէ ասկէց առաջ սրբազան
Աշըգեանը ամբաստանած էր «Հայրենիք»ը իրեւ յեղա-
փոխիլ լրագիր. գիտէք ինչո՞ւ. որովհետեւ «Հայրենիք»
ուզած էր ապագայ մեծ շարեաց առաջն առնել, իսկաւ-
րիարքարան գտնուած դատասանական խորհրդոյ մասին
գրելով, զի այս պատկառելի (°°°) խորհուրդը իր ամե-
նարդար (°°°) ընթացքով թշուառ մարդու մը մահուան
պատճառ եղած էր:

Անիծեալ պատրիարքարան, տես ինչեր պիտի ը-
նէ, բայց հոգ չէ օր մ'անոր հետ ալ հաշիւը կը վեր-
ջացնէ հայ Ազգը: Այս հաշիւը անցեալ տարու Յուլիս

15 էն քննուիլ սկսաւ և կը յուսանք որ չուտով վեր-
ջանայ:

Տպագրական Տեսչութիւնը դադրեցուցած է նաև
Ծաղիկ Մանկանց դպրոցական թերթը առարկելով թէ
նոյն անունով երկու թերթ է և կարելի հրատարակել.
լաւ, ուրեմն ինչո՞ւ չը խափանէ Ծաղիկ շարաթաթերթը,
որ կարելի է գործերու հակառակ ալ դրէ, բայց
այս վերջին չը խափանուիր զի անոր տնօրէնը Մատնիչ
Մամբրէի, Սուրէնեանի և այլ վատերու գործակիցն է,
որոյ նպատակն, ինչպէս ծանօթ է, Բարթուղիմէոսը
Պօլսի պատրիարքը՝ իսկ Մեքիսիսիւնի Սոյ կաթողիկոս
ընել է, շնորհիւ Սուլթանին Ած. յաջողութիւն պար-
գեւէ:

Եւ մէնէ 500ի չափ վիրաւոր զինուոր մայրաքաղա-
քըս բերուած են, և տեղական լրագիրք կը ծանուցա-
նեն որ սաան բժիշկներ և շատ մը վիրաբույժներ է. Չօ-
րարանալը զրկուած են, նոյնպէս Պօլսոյ մէջ ահագին
քանակութեամբ պաշար կը պատրաստուի պատերազմող
զինուորաց համար և դաւառական զինուորներ առանց
մայրաքաղաքս բերուելու պատերազմի վայրը կը զբո-
ւոնին: Իսկ պաշտօնական թերթն Թաղվիմի Վէգայր Օս-
մանեան գօրաց մէկ փոքրիկ յաջողութիւնն զուրս նեա-
լով կը ձայնէ թէ շնորհիւ վեհափառ Սուլթանին մէկ
երկու օրէն ամէն բան պիտի խաղաղի սակայն մէկ եր-
կու օրը մէկ երկու ամսի կը մօտենայ:

Մնանկացեալ Թուրք բռնապետութեան ելեմուտ-
քը բարեկեցութեւ համար օրն անգամ մը հասցի ի նոր ազ-
բիւրներ պարունակող ծրագրեր կը մատուցուն Դուան
այս աղբիւրը ուրիշ բան չէ անշուշտ բայց եթէ նոր
աուրք մը աւելցնել արդէն գտնուած բազմատեսակ
տուրքերու վրայ որոց տակը կը հեծէ թշուառ ժողո-
ւորը: Տուրքերու ծանրութեան մասին սա միայն ըսեմ
թէ Թուրքիոյ մէջ նոր ծնող հայ մանուկէն երկու մէ-
ծիւս կ'առնեն իբր զինուորական տուրք, վասն որոյ
պանդխտութիւնը զարհուրելի կերպով աճած է այսօր
10 տարեկան մանուկէն մինչև 70 տարեկան ծերունին
կը մաշին պանդխտութեան մէջ, 100 տնուր գիւղերու
մէջ հազիւ 40—50 տղամարդիկ կը մնան, միւսներ հե-
ռուն կ'աշխատին ու կ'աշխատին և դարձեալ չեն կա-
րող վաշխառուին տուած դրամին տոկոսն իսկ վճարել:

Անկեալ Տէրութիւն, թշուառ ժողովուրդ. մին-
չեւ ուր պիտի հասնինք:

Վեհափառ Սուլթանը այս ամենուն չը լսելով
նոր նոր բանակներ կը կազմէ և անոնց համար ահագին
ծախսեր կընէ և այս դրամը կը հայթայթէ իր ժողովր-
դի տան կարասիքն ևս ի վաճառ հանելով: Բայց երբէք
չը մտածեր թէ զարհուրելի կերպով ճնշուած տիկը
շատ մեծ և սոսկալի շառաջմամբ կը պայթի: Ած. խեղ
պարգեւէ իսլամաց խալիֆային:

Քառասունի չափ Թուրք երիտասարդներ ձերբա-
կալուած են որոց նպատակն է եղեր Թուրքիոյ կառա-
վարութեան ձեւն փոխել: Այս երիտասարդք ազնուա-
կան դասուն կը պատկանին:

Նոյնպէս Մուլաներ ձեռքաւարուած են որոց նպա-
տակն է եղեր յեղափոխութիւն մը հանել ի Թուրքիա.
առոնց գլուխը կը կենար Իսուսֆ Իզզէտտին որդի Սուլ-
թան Ազիզի որ Չամլըճայի Բէօզքին մէջ բանտարկեալի
մը կեանքն կը վարէ:

Փ. Գ.

ՆՇԱՐԿ ԱՆԵՆ

Նախորդ շաբթուն ցաւալի դէպք մի պատահեցաւ:
Ս. Փրիլիշ ուխտի գնացողներէն խումբ մի, ի դարձին,
պարտեղի մի մէջ տալու և զուռնայով խաղացած և
խմած տանէ՝ երբեմնակի հրագէն ալ կը պարպեն, միայն
արձակուած գնատակն սղոյ մի գլխէն կը վիրաւորէ: Ա-
նուշադրութեամբ պատահած փորձանքի մի զոհ եղած

է սողան, և հաւանաւորն չէ որ ապրի: Ինն երիտասարդք այս պատճառաւ բանտարկեալ են: ոչ մին կը խոստովանի թէ ինքն է վիրաւորը: Տղուն ընտանիքն դատ չէ բացած, բայց Ակնայ կառաւարութիւնն իւր արգարադատութեան պաշտօնին վերայ կը հսկէ: Ամէն մարդ կը զգայ, այս ողբալի դէպքին շնորհիւ, թէ որքան յիմարութիւն է խմել անչափ, և կէս գնով վիճակի մէջ ալ դեռ հրազէնի հետ խաղալ, կեանքի հետ խաղալ, զբօսելու համար:

Սոստաւական դանդաղութիւնն անօրինակ աստիճանի հասած է այս կողմեր, դրամն շարունակ կը քաշուի հրապարակէն, և վստահութիւնն ալ նոյնպէս ոչնչանալու վերայ է, ոչ առնելիք կ'առնուի, ոչ պարտք կը վճարուի: Ով որ դրամ ունի, կը վախնայ երեւան հանել, գործածել: Ընդհակառակն՝ ամեն ոք իւր գործերն ամփոփել և իւր վարկն սեղմելու կ'աշխատի: Դրամի վերջին աստիճան քշուածն է, պարտք վճարելու անկարելիութեան շատերն ստիպուած են ուրախ իրենց պարտքեր, կամ բացարձակապէս մերժել վճարումն: Ասորաֆ ներսն վիճակն շատ նեղ վիճակ մ'է: զիւրայիւրսն կը ուզեն հին հաշիւներն վերաբանալ և սխալ կամ չափազանց սուկոսի ուղղութիւններու ձեռնարկել կառավարութեան միջոցաւ: Նիւթիական նեղութիւնն կամայ կամայ անպարկեշտութեան, անպատիւ արարքներու և նը ուստաւական կը մղէ ժողովուրդն: Տաճկաստանն արագօրէն կը մօտենայ բոլորական կործանման:

ՄԱՐՄԱՐԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՔ

Անցեալ ամառ ուսուցիչ թեւի գործարանն այցելեցի և հիշայ մարդկային հանճարին ահագին գործողութեանց վերայ: Ի միջի այլոց տեսայ մեքենայ մի որ մետաղեայ պարզ թել կ'ընդունէր մէկ կողմէն, և զայն միւս կողմէն դուրս կուտար շղթայի վերածուած: Այս կարգի մեքենաներ շատ կան և աւելի բարդ գործողութիւններով գմարդ կը գմայեցունեն: Մեքենայ մի գիտեմ որ մէկ կողմէն կ'ընդունի նիւթ, զայն կը փշրէ կը թրջէ, և երկար գործողութեամբ կը շինէ զայն ըստ մասին բարակ թել, ըստ մասին նուրբ խողովակ, ըստ մասին մանր գնդակներ, ըստ մասին աղնիւ տարազ, և սակաւին ուրիշ պէտպէս կատարել և փափուկ առարկաներ: Մեքենաներու սքանչելագոյնն է այս, և եթէ անունն կը հարցնես, կընամ ըսել Թորոս, Մարտիրոս, Նուարդ, Հայկանոյ:

Ինչ է հայն զոր բերնիդ մէջ ծամելէ յետոյ կուլ կուտաս, ինչ կը լինի այն ներքին մութ խողովակէ մէջ, և իբրեւ ինչ կ'երևի քո մարմնայ մէջ — իբրեւ մազ իւղ, միս, ոսկոր, աղուտ, ջիւղ, երակ և բազում այլ ինչ որոց անուններն անգամ լսած չես:

Քո մեքենայ գործանալի է նաև այնուզի, անմահ այլ ամեն մեքենայից, ինքզինք կ'աւելէ, կը մաքրէ, կը իւրտօնէ, և եթէ մէկ սեղն կոտրի կամ փլասուի՝ ինքնին կը դարմանէ:

Կրնաս այսքան հրաշալւան գործողութիւններէն մակարեւել թէ մեքենան բարդ և բազմամասնեայ է: Շրթունք, ակոսներ, լեզու, քիմք, սրկոր, ստամոքս, աղիք այդ մեքենայի հանրածանօթ մասերն են, և կը կոչուին ի միասին մարդ ու ողակաւ գործարանը: Մարտողութեան ծառայող գործարանը իմայն աստիճան չեն սակայն, կան դոցա պաշտօնակից կամ օժանդակ բազում այլ գործարաններ որք ի յարաբերութեան են այդ խողովակի այլ և այլ մասանց հետ:

Մարտողական խողովակն բերանէն կը սկսի և աղեաց մինչև վարի ծայրն կ'երթայ: Այդ խողովակ իւր ամբողջ երկայնութեան մէջ նոյն լայնութիւնն չունի. ուրեք կը նեղնայ և ուրեք կը լայննայ: Ստամոքս կոչուածն խողովակին լայնագոյն մասն է, ուր կերակուրն կը ժողովի եւ կարեւոր փոփոխութեանց ենթարկուելէ յետոյ սակաւ առ սակաւ կ'անցնի խողովակին աւելի ըստորին մասանց, որք աղիք կը կոչուին: Պէտք չէ կարծել թէ ստամոքսն պարզ սուպրակ մ'է, թէ և կտաւէ սուպրակի նման բարակ և փափուկ է: Ստամոքսն կըրնայ նկատուի իբր խոհարարապետ, եթէ մարտողութիւնը նմանցունենք խոհարարութեան: Նա է որ կերակուրներն իրարու կը խառնէ և մէկ խմոր կ'ընէ և եփելու գլխաւոր գործողութիւնն կը կատարէ: Ինչպէս կաթստին կամ տապակին մէջ եփուող կերակուրն պէտք է խառնել և խառնել որպէս զի հետզհետէ աւելցուող նիւթերն, աղ, իւղ, ջուր լաւ խառնուին, և որպէս զի կրակին գոյն ամբողջին հաւասարապէս աղէք, այնպէս ալ կ'ընէ մեր խոհարարապետ ստամոքսն. նա շարունակ կը խառնէ և կը դարձունէ կերակրոյ զանգուածն: Նիւթ

լու համար ջերմութիւն պէտք է. ստամոքսն այդ նպատակաւ բաւական նիւթ կը վառէ, նիւթ զոր կ'ընդունի արիւնէն: Երբ ստամոքսն գործի պիտի սկսի, անմիջապէս առ ինքն կը կոչէ արտասովոր քանակութեամբ արիւն, եկող արիւնն իւր ջերմութեան մէկ մասն ստամոքսին գործածութեան յանձնելով կ'երթայ և անոր սեղ տաք արիւն կուգայ շարունակ: Բայց արիւնն միայն ջերմութիւն չհայթայթեր մեր խոհարարապետին, այլ և ուրիշ կարեւոր նիւթեր որք 6—7 միլիոն փոքր գեղձերէ թորելով կը խառնուին կերակրոյ հետ, զայն կը հալեցունեն, կը փոխակերպեն: Այն հեղուկ զոր արիւնն ստամոքսին կը մատակարարէ այս նպատակաւ կը կոչուի ստամոքսային հիւլ:

Ստամոքսն որքան մեծ պարկ մ'է գծուար է ըսել: Նորա մեծութիւնն կը տարբերի ըստ քանակութեան կերակրոյ զոր կընդունի: Յորժամ առատ ուտէ որ, ստամոքսն կ'ընդարձակի որովայնին մէկ չորրորդն կամ մէկ երրորդն բռնելու չափ. և յորժամ բոլորովին պարպուի, կը կծկաի և հազիւ բռնուցի չափ կը մնայ:

Կերակուրներն չեն կրնար ստամոքսէն ելնել ըստ հաճոյս. ստամոքսին վարի ծայրն դռնապան մի կայ փրօռ անուն, որ խիստ հսկողութիւն կընէ, և մինչև որ նիւթ մի հարկաւոր փոփոխութիւններն չկրէ, չկրնար անց գտնել: Ե կերակուր որ դիւրաւ կը մարսուի և է որ աւելի երկար ժամանակ կը պարտի եփուիլ ստամոքսին մէջ. ամէն անգամ որ կերակրոյ զանգուածին այլևայլ մասերն ի հուպ կուգան դռնապանին, սա կը փորձէ դաշն և ճամբայ կուտայ ուժ արժանաւոր է: Իսկ այն նիւթեր որք անմարսելի են, ինչպէս պտղոց կորիզներն, կը սպասեն երկար. եթէ փոքրիկ լիւելով պահուին մարսուած կերակրոյ մէջ և անցնին, լաւ, իսկ եթէ կեռասի կան մանաւանդ գեղձի կուտին նման խոշոր են, կրնան մնալ օրերով և երբեմն տարիներով բանտարկեալ:

(Հարաւակելէ)

ԵՅԼ ԵՒ ԵՅԼԲ

— Ըստ Թայմզի փարիզեան թղթակցին, Ռուսիոյ և Պարսկաստանի միջև դաշնագիր մի կնքելու բանակցութիւնը կը լինին, որոց տրամադրութեանց համեմատ 1, Պարսկաստան Ռուսիոյ պիտի թողու կարգադրել իւր առեւտրական յարաբերութիւններն օտար աէրութեանց հետ. 2, երկու աէրութիւններն օտար երկրաց մէջ պիտի պահեն միայն մէկ ներկայացուցիչ, կամ պարսիկ կամ ռուս: Յայտնի կ'երևի թէ այսպիսի դաշնագիր մի պիտի նշանակէ ռուսական թեւարկութիւն ի վերայ Պարսկաստանի:

Նախավայ վանքի ուխտաւորաց և Պարսից միջև կոխ մի սեղի ռենցած է որպէս յիշեցինք նախորդ թուով, որոյ մասին Մշակի թղթակցին նամակաւ երկար տեղեկութիւն տուած է, թէ ինչպէս մասնաւոր բանակուի մի ընդհանուր ստիակի կռուի փոխուած է բակին մէջ: Քոսն ըստէն ընթացքով Հայերն կը յաջողին յարձակող Պարսիկներն հեռու քշել: Հալածական Պարսիկք սարն կը բարձրանան և կը սկսին հրացանաձգութիւն: Հայ մի կը ուղարկուի, ատոր վերայ բոլոր ուխտաւորք կը կատարին: Լեռներէն Պարսիկք և վանքէն Հայք կ'արձակէին հրացան: Հրացանաց ճախթիւնին կը խառնուին կանանց լաց ու կոծն, երախայից աղաղակն: Հրացանաձգութիւնն կը տնէ կէս ժամ: Պարսից կողմէն ոչ ոք սպանուած է: Այս առթիւն անգամ չէ որ Պարսիկք կը յարձակին այդ վանքի ուխտաւորաց վերայ:

ՄԱՀԱԳՈՑԺ:— Թերթիս մամլոյ տակ դիւելու պահուն ստացանք Տիար Յ. Ներկարարեանի մէկ նամակն Տեթրոյիտէն, որով կը ծանուցանէ Տիար Հ. Մարաշ լեանի մահն քաղաքին « Կրէյս Հոսփիթըլ » ին մէջ, ի հասակի 31 ամաց: Տ. Հ. Մարաշեան կեղ. Թուրքիոյ Գօլէճին ընթացաւարտներէն էր և երկու տարի « Փրի-նցսթըն Գօլէճ » ին մէջ մասթեմաթիքայի բարձրագոյն ճիւղերն և տարրաբանութիւն ուսած էր մեծ յաջողութեամբ:

ԱՆԳՂԻԲԵՆԻ ԶՐԻ ԴԱՍԱՆՈՍՈՒԹԻՒՆ

Կը փութամք ծանուցանել Նիւ Եորքի Հայոց թէ անգղիերէն դատախօսութեան ձմեռանային շրջանն սկսած է Հանրային Վարժարանին մէջ ի 23 ըր փողոց, Բ. և Գ. էփինիներուն միջև, թիւ 11 ըր սենեկու՝ և պիտի չոր լնակուի վեց ամիս, ամեն երեկոյ բաց ի շարաթ և իրարկի օրերէն, ժամ 7. 30 էն 9. 30: Ուսմունքն են հետեւեալք — կարգալ, դրել, ուղղադրութիւն, թարգ-

մանութիւնն և խօսակցութիւնն: Բոլոր գրքերն և գրելու նիւթերն, թուղթ, գրիչ, մեկան, վարժարանին կողմանէ ձրի կը տրուին: Ուրեմն այն Հայեր որք կը բաղձան անգղիերէն ուսանիլ կամ անոր մէջ աւելի առաջ երթալ, պէտք է փութան օգուտ քաղել այս գեղեցիկ պատահութենէն: Թող երթան մեծ թուով, և ժամու ճշդութիւն պահեն:

Եթէ անոնք որ տեղւոյ հեռաւորութեան պատճառաւ կարող չեն այդ վարժարան երթալ, կազմեն 30 կամ 40 հոգիէ բաղկացեալ դաս մի, նոցա ևս պիտի Հայթայթուի դպրոց և ամեն բան դրացի դտնուող Հանրային վարժարանի մի կողմանէ: Այս մասին տեղեկութիւն կրնան առնուլ 23 ըդ փողոցի դպրոցին դասատուէն:



JOSEPH LAJOIE
ԺԱՄԱԳՈՐԾ ԵՒ ԳՈՀԱՐԱՎԱՃԱՌ
231 FRONT ST.
WORCESTER MASS.

Այս քաջածանօթ վաճառատան մէջ լաւ ապրանքներն կը տրուին չափաւոր գնով, և ժամացոյցներ կը նորոգուին խնամով ի ձեռն Հայազգի ճարտար ժամագործ Տիար Փրուտի, որ նոյն վաճառատան մէջ գործելով՝ անգղիերէն խօսիլ չգիտցող Հայոց մասնաւոր գիւրութիւն կ'ընծայէ:

O. F. HARRIS
ՍՏԵՄԵՆՔՆՅԵ
476 Main St. Worcester, Mass.
ՎԱՐՊԵՏ ԵՒ ՓՈՐՁԱՌՈՒ ԲԺԻՇԿ Է
ԱԿՈՒՆԵՐՈՒ

WORCESTER FIVE CENTS SAVINGS BANK
No. 246 Main St. Worcester, Mass.

Այս պանքան մինչև հինգ սենթի փոքր գումար կ'ընդունի: Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսաց առաջին օրէն կը Հաշուի դրամի շահն 800ին 4: Պանքային ժամերն են 9էն 1, և 2էն 4: Շաբաթ օրերն՝ 9էն 1:

E. B. STODDARD, President.
J. STEWART BROWN, Treasurer.

ՓՈԽՆԵՆԿԻՐ

ԵՒ

ՆՇԻՒ ՏՈՄՍԿ

Ութ տարուան փորձառութիւնն կ'ապահովէ Հասարակութիւնն թէ մեր փոխանակագրեր են ամենածան և ապահով թուրքիոյ ամեն քաղաքաց Համար, կեդրոնաւորելով Խարբերդ և Կ. Պոլիս: Նոյնպէս կրնամք դրամ զրկել Եւրոպա ուր որ ուզուի պանդայի միջոցով: Նաև գոհացուցիչ գներով տոմսակ կը վաճառեմք Ամերիկայէն Եւրոպա, Եւրոպայէն Ամերիկա ճամբորդելու Համար, նոյնպէս թուրքիոյ ամեն նաւահանգիստներէն գալու և երթալու Համար Թրիէսթի ճամբով: Նամակներու անմիջապէս կը պատասխանուի: Պէտք է դիմել կամ գրել ինձ այսպէս M. S. T. Nahigian, Worcester Mass.

ՓՈԽՆԵՆԿԻՐ

Խարբերդ, Տիգրանակերտ, Մալաթիա, Կ. Պոլիս, Տրապիզոն, Մարսիլիոս, և Տաճկաստանի ուրիշ քաղաքներ, դրամ կը շրկեմ ապահով և գոհացուցիչ պայմաններով:

Դիմել առ S. Մ. Շուշանեան
D. M. Shooshan 41 Exchange St. WORCESTER MASS

H. A. BASSETT

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԿՕՇԻԿԻ

259 MAIN ST. WORCESTER, MASS.

Աղէկ ապրանք և ածան:

ՆՈՐ ՀՐԵՏԵՐԵԿՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏ

ԱՏԵՆ ԱԽՕՍՈՒԹԵԱՆ

21 ԴԱՍ 16 ՊԱՏԿԵՐՈՒ

ԵՒ

ՅԱԻԵԼՈՒԱԾՈՎ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՕՏԱՐ ՀԱՏԸՆՏԻՐ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ
ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱՔԱԲԵԼԵՆԻ

Դին մէկ թալէռ կամ հինգ ֆրանկ. ճանապարհի ծախքն հրատարակչին վերայ է. բայց յանձնարարութիւնք չեն կատարուիր եթէ գինն կանխիկ չվճարուի:

Տաճկաստան ղրկուելու օրինակներէն յատկապէս վերցուած է Աղգային Ընթերցուածոց յաւելուածն, եւ եթէ Տաճկաստանի վարժարանաց հոգաբարձութիւններէն խնդրուի, գնէն 100ին 50 զեղչ կը լինի:

TANQUEREY

ԼՈՐՍԵՆԳԵՐԷ

63 and 65 W. 14th St. Corn. Sixth Ave. New York.

Կուզե՞ս քանկան մեծութեամբ մէկ կենդանագիրդ ծրագրչեալ (crayon) և 12 օրինակ լուսանկար պատկերդ, ՄԻԱՅՆ ՀԻՆԳ ԹԱԼԷՌՎՈՎՎԱՐԵԼՈՎ. ներկայացուր զայս կտրօն վերոյիշեալ հոգաւոր արուեստանոցն: Վճարումն պիտի ընես հետեւեալ կերպով.

Երբ նստիս լուսանկարդ Հանելու Համար.....\$2.50
Երբ կենդանագիրդ և լուսանկարդ աւարտին...2.50

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

ED. LEGOLL, PHARMACIST,

Successor to W. CASWELL,

Pharmacie Francaise,

286 SEVENTH AVE., BET 26 TH & 27 TH STS., N. Y.

ESTABLISHED 1846.

Դեղագրեր կը պատրաստուին խնամով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 ըդ փողոցներու միջև արեւելեան կողմն:

—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սենթ

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱՔՈՐԾ

(Հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱՔՐԻԷԼԵԱՆ